Կուսակցության պետական գրանցումը մերժելու
օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք**	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի**
Կուսակցություն	ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը մերժում է կուսակցության պետական գրանցումը, եթե՝ **1.** կուսակցության կանոնադրության կամ ծրագրի դրույթները ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բռնի տապալմանը, կամ **2.** կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի պահանջներին *(մասնավորապես՝պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 անդամ, որոնք ներկայացնում են Երևան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երևան քաղաքը և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ը, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումներ՝* *1) Երևան քաղաքում՝ առնվազն երեք ստորաբաժանում կամ* *2) Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ* *3) Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում:*), կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության ստեղծման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ	Կուսակցության պետական գրանցումը մերժելու հիմքերն են՝ **1.** կուսակցության կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը. **2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը. **3.** ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ կուսակցության ներկայացրած այլ փաստաթղթերին. *(մասնավորապես՝* *Արձանագրությունը պետք է բովանդակի տեղեկություններ՝* *1) նիստի գումարման օրվա և վայրի մասին.* *2) Արձանագրության կազմման օրվա մասին.* *3) նիստի աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ ձայնի իրավունք ունեցողների) մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).* *4) նիստի աշխատանքներին մասնակցած անձանց մասին (եթե առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով այլ բան նախատեսված չէ).* *5) նիստի օրակարգը.* *6) քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները.* *7) այլ տեղեկություններ, եթե այդպիսի պահանջ սահմանված է առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով, այլ օրենքներով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:): (17-րդ հոդվածի 6-րդ մաս):*

	կանոնադրության հաստատման կամ ղեկավար կամ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև ընտրված չէ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար), կամ **3.** կուսակցության պետական գրանցման դիմումը ներկայացվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարի անց: (11-րդ հոդված 1-ին մաս)	**4.** անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում: (36-րդ հոդված 1-ին մաս) *(մասնավորապես՝* *1) ոչ առևտրային կազմակերպության անվանման գրանցումն իրականացվում է կազմակերպության գրանցման հետ միաժամանակ: (32.1 հոդվածի 1-ին մաս)* *2) Կազմակերպության անվանման գրանցումը մերժվում է, եթե դրա տարբերակող նշանակություն ունեցող անունը՝* *ա) նույնական է սահմանված կարգով գրանցված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը.* *բ) նույնական է Կազմակերպության գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված այլ իրավաբանական անձի լրիվ անվանմանը (անվանման հապավմանը).* *գ) պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին:* *(32.1 հոդվածի 6-րդ մաս)*

Կուսակցության փոփոխությունների պետական գրանցումը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը

Կազմակերպական-իրավական տեսակը	**«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք**	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի**
Կուսակցություն	«Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով կուսակցությունների կանոնադրության և ծրագրի փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չէ	**Կուսակցության փոփոխությունների պետական գրանցման մերժման հիմքերն են՝** **1.** իրավաբանական անձի փոփոխությունների՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված կարգի խախտումը. **2.** սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին (մասնավորապես՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ *1) Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար):* *(8-րդ հոդվածի 1-ին մաս)* *2) Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ:* *(8-րդ հոդվածի 2-րդ մաս)* *3) Կուսակցության ծրագրի և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ:* *(8-րդ հոդվածի 3-րդ մաս)* *4) Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս*

		առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի և վայրի մասին ծանուցում, ինչպես նաև կուսակցության կանոնադրության և ծրագրի նախագծերի հիմնական դրույթները: *(8-րդ հոդվածի 4-րդ մաս)* *5) Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 անդամ, որոնք ներկայացնում են Երևան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երևան քաղաքը և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ը, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումներ՝* *ա) Երևան քաղաքում՝ առնվազն երեք ստորաբաժանում կամ* *բ) Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ* *գ) Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում:* *(9-րդ հոդվածի 2-րդ մաս)* կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին, ընդ որում, առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության դրույթները օրենքին համապատասխանելու տեսանկյունից չեն ստուգվում. **3.** առկա է իրավաբանական անձի փոփոխության գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատարանի համապատասխան որոշում կամ վճիռ: (43-րդ հոդվածի) **Կուսակցության ծրագրի փոփոխության պետական գրանցումը մերժելու հիմքեր նախատեսված չեն:**